

առանց Նրան ոչինչ չեւ կատարւում որ մեզ հանգիստած բալոր երեսթները և պատահարները ի վերջոյ մեր բարուոյն և օգարին պիտի ծառային՝ հաւատքը և յոյս որսնք ուսքի են կանգնեցնում մեր ընկճուող արիութիւնը և խրախուառում գիմելու գեղի բարոյական կեանքի մաքառումը: Երբ մեր ծերութեան օրեւրում մեր ոյժերն սպառումնեն և մենք ծաղրուումնենք մարդկանցից: Երբ սպիտակ պիեաց տակ ձնշուած ոչինչ չենք տեսնում մեր առջեւ բայց եթէ մի ցորս գերեզման՝ ոչինչ մեր ետելու բայց եթէ մեր արեան քրամինքով կառուցած ամբողջ կենաց շենքի խորտակումը՝ ի՞նչը կարող է մեզ միխթարել փախցնել մեզ վերայ յարձակուող մահուան սարսափը . . . Արգեօք տանջւող յուսահատութեան մեջ չենք անիծի մեր ծնունդը, մարդիկ և աշխարհը եթէ շունենանք հաւատք, և յոյս որ մեր գործ դրած աշխատանքը կորսուած չեւ որ մեր արածներն իրեւ քարեր պիտի ծառային այն հոյտապ և վեհ շինուածքի կառուցման համար, որ կոչւում է Ասուծոյ արգարութեան յաւիտենական թագաւորութիւնը որ տարածում է գերեզմանի և մահուան միւս կողմը և ուրիշ բարքանշիւր մեզանցից պիտի հատուցում ընկունել, որքան արժանի է . . . Յիշրաւի մէկն իմաստակ պէտք է լինի կամ երեսկայութեամբ ցնորուած, եթէ կամենար պահ հարցերին լրումն տալ կեանքի խորհուրդը լուծել՝ առանց հաւատքի:

Այսպէս մենք գտնուում ենք որ ծշմարիտ առաքինաւկան կեանքը, բառիս ամենաընդարձակ առմամբ, անհնարին է առանց հաւատքի: Հաւատքը այն զրտչն է, որով մենք գոտեպնդուած կարող ենք քաջամարտիկ զինուոր հանգիստանալ կեանքի բարոյական կոռուի մեջ: Առանց հաւատքի ոչ մի մեծ, զիւցազնական գործ շկայ երկրիս վրայ՝ չէ ծեննարկուած եւ չէ իրազործուած: Այդ է պատճառը, որ Յիշրու պահանջում է մարդկանցից այն պիսի հաւատք, որ ընդունակ է լիռներ խորտակել այսինքն բարոյական կեանքին խոշընդու լիռներ: Հաւատքով է, որ առաքեալները նուուծեցին բավանդակ քաղաքակրթեալ տշխարհը հաւատքով է, որ բոլոր մարտիրուները վրեաց գաղափարների համար մաքառեցին:

աանջուեցին և բարւոյ յազմութեան յուսով իրենց կեանքը զնելով՝ նահատակուեցան: «Ո՞վ կկամենար մեռնել մի բանի համար, որի յազմութեան վերայ ապահով չէ, և ի՞նչ կմնար աշխարհի պատմութիւնից, եթէ հաւատքը մէկդի ձգուերս: Բոլորովին ճշմարիտ է, Գեօթէ ասածը թէ աշխարհի պատմութեան իսկական միակ և ամենալուրջ խնդիրը մնում է հաւատքի և անհաւատութեան ընդհարումը: «Բոլոր գարազլուխները, շարունակում է նաև որոնց մէջ իշխում է հաւատքը՝ փայլուն են, սիրո բարձրացնող և պաղաքեր՝ ժամանակակից թէ գալոց աշխարհի համար: Մինչդեռ բոլոր գարազլուխները ուր անհաւատութիւնն է իշխում, թշուառ ելք ունին, և եթէ մինչեւ անգամ մի վայրկեան տաերեղթ փայլով կամենացին պարծենալ՝ անհետանում են սպազայի առաջ, որովհետեւ ոչ ոք անպաղաքեր ժամանակի ճանաչողութեամբ տանչուելու ախորժակ շունիք:

Հաւատքը ճշմարիտ բարոյական և առաքինական կեանքի արմատն է, որից հոսում, տարածում է բոլոր հիմքը և զօրութիւնը գեղի ծառի զերերը, Մեր գործերը այդ ծառի ծաղկունքներն են: Խնչպէս ծառը կատարում է իւր կոչումը՝ ծաղկում է և պրառու բերում միայն այն գեղքում, երբ ամուր կանգնած է արմատի վրայ, այնպէս էլ մենք կիարողանանք կատարել մեր կոչումը՝ առաքինի և ազնիւ գործեր յառաջ բերել ծառայելով Ասածուն և մարդկութեան, միայն այն գեղքում երբ ամուր, հաստատուն ենք քրիստոնէական հաւատքի վրայ:

Աւ. Տ. Գ.



ՄԻ ԱԿԱԽԸՆԴԳԻՒՄ ՄԱՍՑԱԺ ՀԱՅՐԱՊԵՏ

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ՑՆԻՑ.

ՄԱԿԱԽԸՆԴԳԻՒՄ ԽՈՐԵՆԱցին և Յուսիկի և սերական մէջ միայն մի կամուռ զիկան է, յիշում՝ «զՓառեներս» ոմն յԱշտիշատից Տարօնոյց, որին նորա ասելով բնարել են պասն ոչ կայլ այր յազգէ դրիգորիս: Փաւառու բիշզան-

դացին յիշում՝ երկու կաթուզիկոս՝ «զՓառակն ոմն էրեց ի գաւառէն Տարօնոյ» ի մեծէ մարգարէանոցէն Ծովաննու» և «զՇահակ ոմն անուն ի տոհմէ զաւակին Աղբիանոս եպիսկոպոսին»; թէ, եպամամանունների մեծագոյն մասը չին թէ, նոր ժամանակներում Խորենացուն են հետեւել բայց մեզնից առաջ արգէն ուրիշները նկատել են որ ինչպէս առհասարակի այնպէս և այս դէպքում նախապատութիւն պէտք է անկատած Փաւստոսին տալ և նորա հազորդածը միայն իրբե պատմական տեղեկութիւն ընդունել: Այսաեղ յառաջ բերելու մեր նոր զիտողութիւնն այն է, որ Փաւստոս՝ Փառէն անուանելով Խորենացու Փառներէց կոչած կաթուզիկոսին բոլորովին հակառակ նորա ցուցման՝ այդ Փառէնին իրբե Հաւսաւորչի առն շառաւիդ է ներկայացնում: Գոնէ մեր կարծիքով Փաւստոսի խօսքերից ուրիշ եղակացութիւն հանել կարելի չէ:

Պէտք է ի նկատի ունենալ որ ինչպէս առանձին կերպով մատնանիշ է արել ուսուցապետ Գելցէր իւր յայտնի գրուածքի միջ՝ * մեր եկեղեցւոյ պատմութեան առաջին շրջանում կաթուզիկոսները՝ լսաւամենայն հաւանականութեան նաև շատ եպիսկոպոսները յաջորդում էին միմեանց ժառանգանունիկան կարգով յորդւոց ցորդի: Նախարարական ցեղերի նման հայրապետական և բարձր կարգ՝ եպիսկոպոսական աներն ևս մեծամեծ կալուածների տէր էին որոնք այդ առն սեփականութիւնն էին համարուում, և քանի որ մեր հայրապետակաները սովորաբար ձեռնազբութիւն ընդունելուց առաջ ամուսնացած էին լինում և որդիք էին ունենում՝ նոցա կալուածներն անցնում էին հարկաւ իրենց որդւոց ձեռքը և միայն այն դէպքում հայրապետանոցի պէտքերին ծառայում: Երբ վերջիններս հայրապետական աթոռի վերաց էին բազմած: Ս. Յուսիկի մարտիրոսական մահից յետոյ նորա իշխանութեան ժառանգներու մանկահասակ որդիք էին մնացել որոնք արելուց հանգերձ իրենց նախ-

նեաց կալուածներին, * արհամարչեցին հոգեորական կոչումը և արժանի զգանուեցան նոցա աթոռի վերաց բազմելու: Եթէ Գանիլէլ ասորի քորեպիսկոպոսը թագաւորի և իշխանների կողմց հրաւիրուում է այդ պաշտօնին՝ կարելի է ենթագրել որ նո ոչ թէ իսկական կաթուզիկոս և ա. Հուսաւորչի յաջորդ պէտք է համարուէր, այլ իւր անձնական արժանեաց շնորհիւ վայելած հեղինակութեամբ պէտք է ովլուխ առաջնորդք լինէր եկեղեցւոյ և մի առակ տեղապահութեան պաշտօն փարէր, մինչեւ որ ա. Հուսաւորչի տնից մի հայրապետ հանդէս գար: Բայց գուցէ այս դէպքում զիր էր իւր իսպան առաւել ծիրանի քաղաքականութիւնը, որի վեսան էր ս. Յուսիկի և նորա գտներ կենացութիւնը մերժելուց յետոյ՝ համարձակութիւն էր ունեցել նաև գտնելու նորա առաջ եկեղեցւոյ գաները: ** Տիրանո որին Փաւստոս իրբե նախարարական ցեղի կատաղի թշնամի է ցոյց տալիս անշուշտ կոտորել էր տալիս նոցա ոչ թէ մի անմիտ մոլութիւնից գրգուած, այլ ինչպէս և իւր որդին Արշակ կենդրոնական իշխանութիւնը զօրացնելու նպատակով: Ս. Հուսաւորչի տան հետ աղբակցական կազիր ունենալը ուրիշ հանգամների հետ մէկտեղ կարող էր նպաստել հայրապետական աթոռը թագաւորական գահի համար նեցուկ գարձնելու: բայց երբ նորա շուքը շատ մեծացաւ և այնպիսի ներկայացուցիչներ ունեցաւ նաև որոնք հրապարակաւ ընդդիմութիւն ցոյց տալ թագաւորին չեն վախենում՝ վերջինս կարող էր մատածել որ նորա չափից աւելի բարձրանալը վտանգաւոր էր իւր գահի համար և մի օտարազգի, աշխարհական մեծութիւնից զուրկ հոգեռութեանի հայրապետ կարգելով՝ ս. Հուսաւորչի

* Տիւ. Փաւստոս. Գ. Դուր. Գլ. ԺԹ.:

** Աւրիշները նկատել են սրբին, որ Խորենացու պատմածը, ու Յուլիանոսի պատմելը եկեղեցում դնեն: և Յուլիֆի բնդոյմարքի պատման եղել, պատմական անձնութիւն է, մինչ Յուլիանոսի օրով և նորա կայու լինելոց (362 ր.) շատ տաք (350 ր.-ից ի վեր) Հայոց բազաւորը Տիրամի ուղի Արշամ եւ Կարելի և Ամրադրի ու Տիրամի իւր վեսայի մէջ առաջուց արդին կայու միայն նորա զեղի բարձր յետու պատման գրցուողը:

* Հ. Գեղցէր.—Փաւստոս Բիրզանց կամ Հայի հեղեցոյ սկզբնաւորութիւն. Վեճեցիք. 1896:

տան հեղինակութիւնը ձգելու աշխատեր: Յամենայն դժ.ս Դանիել իւր ընտրողների ակնկալութիւնը չարգարեցվեց և դեռ իշխանութեան չհասած՝ խեղամահ եղաւ անօրէն թագաւոնի հրամանով:

Ահա այդ ժամանակի ս. Յուսիկի որ զիներից մէկին բանի ձեռնապրութեամբ կամ թուղթկառ անելու անյաջող փարձից յետոյ առում է Փաւառու՝ համ եղեւ ամենեցուն առ համարակի զի ինմին տանէ իշխանութեանն Գրիգորի գացեն: որ կացի նա զաթոս հարցնա և յարում է անդապէս. «Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓաւէն ոմն երեց ենք», իսկ Փաւէնի պատմութիւնն անելուց յետոյ երբ նորա յանջորդին և անցնում՝ տառմ է. «Ազա իրեն ոչ զոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի ազա նմանեցուցին զՇահակ ոմն անուն ի տոհմէ զաւակիւ Ազրիանոս եպիսկոպոսին: Պարզ չէ միթէ, որ Փաւէն ուրին ի տանէն Գրիգորի էր: Հասկանալ յառաջ բերուած խօսքերն այն մաքով, թէ Փաւէն իրեն Աշտիշատի մայր եկեղեցւոյ երեց և վերակացու ս. Լուսաւորչի յաջորդ լինելու արժանի համարուեցա՝ թող չէ տալիս ամբողջ պատմութեան կապակցութիւնը և այս նախնական ժամանակի կորդերի մոսին Փաւառուի տուած զալափարը. որովհետեւ, ինչպէս իրաւամբ նկատել է Պրոֆ. Գելցեր, մինչեւ Ե. գարու կեսերը այնչափ խիստ էր ժառանգականութեան օրէնքը կաթուղիկոսական իշխանութեան համար, որ երբ ս. Լուսաւորչի յեղից ոչ ոք չէր գտնուառմ՝ պահանջուում էր անպատճառ Ազրիանոսի ցեղից մէկին ընտրիլ * իսկ Ազրիանոսը ս. Լուսաւորչի ձեռնապրած եղիսկոպոսների մէջ աւագագոյնն էր: ս. Վըրթանիսի օրով զեռ մեծ պատիւ էր վայելում: Մանաւագեան նախարարութեան ջնջուելուց յետոյ նորա կալուածներին տէր եղաւ և այսպէս. «Մանաւագակերտ ամենայն սահմանօքն և զաւական հանգերձ նորա ա-

թոսի սեփականութիւնը մնաց ինչպէս որ Աշտիշատը ս. Լուսաւորչի ամբաթնն էր Հետեարար: Կմէտ, Փաւէնի մահից յետոյ Ազրիանոսի սերունդից մէկն է ընտրուում առաջին անգամ այն պատճառարանութիւնմբ: որ ս. Լուսաւորչի սերունդից ոչ ոք չկար՝ Փաւէն չէր կարող մի պատահական անձնու որութիւն լինել. «ի մեծէ, մարդարեանոցին Յովաննու մի նոր երեց գանելլը միշտ զիւրին էր. հայ նախարարների ջանքը Դանիելի մահու ամբ թափուր մնացած ամոռով վերաց ս. Յուսիկի որդիներից մէկին կաթուղիկոս նստեցնելու կամ այնուհետեւ նոցա խորհուրդը՝ «ի տանէ իշխանութեանն Գրիգորի» մէկին դանելու: բացարուամ է նորանով մեայն: որ ինչպէս իւրաքանչիւր պահպանելու նստեածախնդիր էր, այնպէս կամենուամ է, թէմի սների իրաւունքները պահուած տեսնել և թոյլ չուալ: որ մէկն ի հաշիւ և ի վեաս միւսերի զօրանայ:—Յայտնի է առհասարակ: որ առատական մանր իշխանութիւնների բաժանուած երկրներում ինչպէս եր հին Հայաստանը շատ մեծ նշանակութիւնն է տրուում ուշմայնն ազնու ականութեանն և անտշխարհիկ ու համարակ ծագուանն անցը մէկը հեշտա թէնամբ մեծ պատիւների չի հաօնում: Այդ կարելի եղաւ մեր կաթուղիկոսների համար միայն այն ժամանակի երբ Արշակունեաց թագաւորութեան անկմանը երկրի մէջ ափրոց կայքայուեցան: և մատաւանով երբ ս. Սահմանի և ս. Մեհերսպի աշակերտները նոր ուզգութիւնն նոր կեանք և նոր հայեացքները մտցրին Հայոց եկեղեցւոյ մէջ: Այս պատճառու եւ մենք անհաւանական համարեցինք: որ ասորի Դանիելին կաթուղիկոսական բարձր աստիճանի հասցնելու զիւաւորութիւն եղած մնիք եթէ, գարա համար կովմեակի զօրեց զրգիշներ չկային: նոյն պատճառաւ անհաւան ենք զանում: որ Փաւէն առանց աղքակական կապ ունենալու ս. Լուսաւորչի տան հետ՝ իւր նախորդների արժանիքը չուներց ուղիղ

* Գել ս. Յովանիկից յետոյ ինչպէս նեւում է Փաւառու պատճերինից (Խուսաց Գաւ կմ.), փորձ է եղել Ազրիանոսի ժառանգներին յանձնել կրիմի կարուղիկոսական իշխանութիւնը:

գծով նոցանից չէր սերուում և այնպիսի մի անարքան ժառանգ թույնեց օրպիսին էր իւր իսկ նկարագրած Յօվհաննես եղբակացոսը. * իսկ որ զլխաւորն է, թէ նա և թէ մասսանդ նորանից յիտոյ եկող պատմվներ շատ պիտի զգու արանոցին այս հանգամանքը հաջակեցնելու այն աւանդութեան հետո որի համաձայն ա. Լուսաւ որիչ Պարսկաստանից եկող Անոնի միակ որդին էր Հայաստանում մնացած և չուներ ախույսի մի ազգական կամ շառաւ իդ որից Փառակն կարողանար սերած լինէր. Սակայն ա. Լուսաւ որչի ծագման մասին մեր ձեռքն եղած տեղեկութիւնները պատմապիտական տեսակետից այնչափ մոօքնն են և սուզ որ մենք նոցանից մի որոշ տահմագրութիւն կազմել և նորա ցեղին պատկանող մի կողմնակի ձիւղի գոյութիւնը մերժել ոչ մի գեղքում չենք կարող:

Արջափ թրաւացի է արգեօք այս նկատմամբ Գեղցերի այն զիտողութիւնը, թէ Անոնի Պարսկաստանից գալու զրոյցը պատմական չէ այլ ո. Լուսաւորիչ բուն Հայաստանում բնակող Պարթևների սերանգ պէտք է համարուի, հայրապետական պատմական համարակաց առաջ արգելն այն կալուածների և քաղաքացիցութեան մեծ մասին, որ յետոյ նորա որդուց ժառանգութիւն մնաց՝ մենք զգու արանում ենք քննել, կասենք միայն որ յիրաւի նորա և նորա որդուց բոլոր կեանքն ու գործունեութիւնը ոյնպիս են նկարագրուած. Ազգանգեղոսի և Փառասոսի պատմութեանց մէջ, մինչ մենք ամենին չենք մտածի, թէ նոքա օտար ծագումից են և ոչ բնիկ ու սերտ սիրով իրենց հայրենիքի հետ կապուած Հայեր՝ եթէ, Անոնի զրոյցը շնիւրը. Այսու ամենային նաև այդ աւանդութեան մէջ Անոնի հետ նորա եղբարց Հայաստան գալը, ո. Գրիգորի հետ մի ուրիշ մանկան կոտրածից աշատուիլը ելնի պատման ենք անդամները, որից սերուել էր Փառեն և որին անցաւ կամ ուղիկուած թիւնը, երբ զլխաւոր գծից սերունդ պակասեց:

Կ. Ա.

,ՊԱՏՈՒԹԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՐ ՄԱՍԻՆ

Երարատի այս տարրուան Մայիսի թիւն մէջ (էջ 183) հրատարակուած էր Մերկերիս Նզամեան ստորագրութեամբ յօդուած մը՝ « պատաշաց բառին ծագման մասին, ուր հեղինակը մերժել է ետք Տ. Հերմենարաբէյէնտեան քահանայի ծանօթ մեկնութիւնը (պատարագ=իրը պրո. բա դար կարան), գուրս հանել, արտաքսել. » կառաջարկէր ուրիշ նոր մեկնութիւնը մը. Այս մեկնութեան համեմատ իրը թէ « պատաշաց կը չափի (Հարկաւ փիտառութեամբ) արաբերէն ժամից բառին պարական նուազական ժամից ձեւնու որ իր նշանակէ բազարիկը. — Այս մասին երեցաւ իրաւացի զիտողութիւնը մը Բիւրակն հանգէօի խմբագրապահ՝ Պր. Պ. Խաչկանցի կողմէ (Բիւր. թիւ 21, էջ 415), ուր Յարզոյ յօդուածագիրը կը յայտնէր թէ « պարսկէրէնն ու հայերէնն արաբերէն բառեր փոխ առած են Ը. գարուն սկիզբն, արաբական տիրապետութեան միջոցին. և որովհետեւ զպաշտաց ուկեցարու մէջ յաճախ գործածուած է, Ը. գարէն շատ տապջ, հետեւապէս անհնար է որ արաբական փիտառութիւնը լինի. — Եթէ ասորերէնի կամ արամերէնի բառագագանձնն մէջ գտնուի այդ բառը ինդիրն այն ատեն տարրեր կերպարանք կստանայ:

Այս կոչման պատասխաննեց Փարիզէն ըևեռագէտ բարեկամն Յարգելի պր. Ա. Քամացթեան (Բիւր. թիւ 23, էջ 435)՝ որ բառին սեմական ծագումը կը հաստատէր. զոյց տալով որ « պատաշաց բառը կը գտնուի ոչ միայն ասորերէնի մէջ, ուսկից մտած է մեր մէջ նոյն բառն, այլ նաև արամերէնի, եթովզացերէնի և ուրիշ սեմական լեզուներու մէջ. Բառին արաբական ձեւն է ժամանակը, ջարդել, ճաշել իմաստներով. ուսկից յառաջարար=ճաշել, ճաշի սկախի, նախընթերել, իսկ ճեզովզացերէնն է տեսար նոյն իմաստներով. » այսպէս ալ արամերէնը փատար կամ փատ ձեւերով ու միենոյն նշանակութիւններով. . . Ասորերէն Փատիր կը նշանակէ իրը գոյական՝ « հաց անխմոր, բազարջ. » այսպէս ալ արաբերէն ժամիր և արամերէն փատար կամ փատ բառերն, Ասոր բայական ձեւն ալ կը նշանակէ, միւս վիրի ցուցուած բառերուն նման, « գիշել, ջարդել, ճաշել, նախաճաշել. »

Խնդիրն այսպէսով կարիի, մանաւանդ թէ կրօնական տեսակետով (պատարագ՝ իրը ըեկանել, ճաշակել, բաղարջ) շահաւետ և գեղեցիկ մէկնութիւնը ուսուցած կը լինի. Սակայն այստեղ կայ զիտելի էւտ մը՝ զօր բնաւ. նկատողութեան չեն առած նոյն բառին երեք յարգելի քննիչներն հաւասարապէս. Այս է որ պատաշաց բառը կը նշանակէ ոչ միայն մեր Ա. պատարագի խորհուրդը, այլ նաև հասարակօրէն զնն մատադ և մանաւանդ պարզապէս ընծայ. նույր, Բառն ի հարկէ առաջիզ

* Skuz. Զ. Կոյր. Դլ. Բ.: